ՀԱՅԱՍՏԱՆԻՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑՁՈՐԻՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 114 -Ա

« 02 »ՄԱՅԻՍ 2022Թ.

«ԱՐԵՆԻԻ» ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՊՈԱԿ-Ի ՏՆՕՐԵՆ ԱՍԱՏՈՒՐ ՄԿՐՏՉՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 216-րդ հոդվածի, 218-րդ հոդվածի 1-ին մասի, 220-րդ հոդվածի 1-ին մասի, 222-րդ հոդվածի, 223-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 224-րդ և 226-րդ հոդվածների, 227-րդ հոդվածի 1-ին մասի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի, 14-րդ հոդվածի 1-մասի 6-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի 2022 թվականի տարեկան գործունեության ծրագրին համապատասխան Տեսչական մարմնի Վայոց ձորի տարածքային բաժնի մասնագետների կողմից ՀՀ Վայոց ձորի մարզում գործող պետական բժշկական հաստատություններում իրականացված հրդեհատեխնիկական հետազոտությունների արդյունքում արձանագրված խախտումները, «Արենիի» առողջության առաջնային պահպանման կենտրոն ՊՈԱԿ-ի կանոնադրության 27-րդ կետի 1-ին, 4-րդ կետերը, «Արենիի» առողջության առաջնային պահպանման կենտրոն ՊՈԱԿ-ի տնօրեն Ա. Մկրտչյանի հետ 2018 թվականի դեկտեմբերի 21-ին կնքված թիվ 407 աշխատանքային պայմանագրի 2.2-րդ կետի «դ» և «զ» ենթակետերը և հաշվի առնելով Ա. Մկրտչյանի 26.04.2022թ. և 02.05.2022թ.գրավոր բացատրությունները՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Աշխատանքային պարտականությունները ոչ պատշաճ կատարելու համար «Արենիի» առողջության առաջնային պահպանման կենտրոն ՊՈԱԿ-ի տնօրեն Ասատուր Մկրտչյանին ենթարկել կարգապահական պատասխանատվության՝ կիրառելով «նկատողություն» կարգապահական տույժը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգով Ա.Մկրտչյանին ծանուցելու հաջորդող օրվանից:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում:

Recoverable Signature

X

ԱՐԱՐԱՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Signed by: GRIGORYAN ARARAT 1310850550

Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ք. Եղեգնաձոր